նակներ սեղմած մատերով... Ահա մի բազուկ երկարում է, բռնում է վարիչի կոկորդից, ուզում է խեղդել...խեղդել...

Վարիչը ուշքի է գալիս, դուռը բաց անում ու նետւում մօտակայ սենեակը: Բազկաթոռի վրայ, գլուխը կախած, ոտքերը երկարած, ձայնը կորցրած տենօրը, խոզի խորովածից յետոյ, քնել էր եւ աղմկալից խռնփում էր:

— Աւանա՛կը, նորից լափել է,— մտածեց վարիչը...

* * *

Երաժշտանոցի մեծ դահլիճը ծայրէ ծայր լեցուն էր:

Նոյն ժամին՝ Համլէթ, Օթելլո, Եաղօ՝ ողբերգու եւ կատակերգու բոլոր դերասանները, տարիքը առած եւ չառած դեղուհիները, յուշարար, բեմավար, բեմաղարդ, Դոն Ժուան, Դոն Կիխոտ՝ բոլոր ժեստերը, բոլոր գրականութիւնները իրենց գլուխը մտահոգ կախած ներս էին մտնում Պետական Թատրոնի շէնքից:

Նոյն ժամին՝ տասը բոպէ պակաս՝ Համալսարանի դասախօսները նստում էին մանկավարժական թանգարանի սրահում շարած նըստարանների վրայ, գնդասեղով ծակուած գոյնզգոյն թիթեռնիկների, չորացած խլեզների, շիշերում ոլորուած օձերի եւ հանքային քարերի հետ:

Երաժշտանոցում զտում է պրոլետ մի բանաստեղծ:

Թատրոնում զտում է պրոլետ մի տխմար:

Համալսարանը զտում է Լուսաւորութեան Կոմիսարիատի մօրուքաւոր, երկայնահասակ եւ ջղագրգիռ մի պաշտօնեայ:

Սեղան, թուղթ, գրիչ: Երկու կողմից իւղոտ մատերով աղջիկներ:

Երաժշտանոցում մթնոլորտը լարուած է: Զայկովսկին մեկնել է Սպանիա եւ Մոցարտը requiem է երգում: Խոր լռութիւնը դադաղը ուսերին ման է գալիս: Գերմանական եւ իտալական դպրոցի դաշնամուրները փակուել են: Տենօրը մոռացել է իր հռչակաւոր «Կռունկը», իսկ վարիչը դէմքին մոմ է հալել: Սակայն, վայր ընկած այս կուրծքերի մէջ մի բան ցցուել է: Տիկինը: Ասես փայտ է կուլ տուել: Ուղիղ, չորացած ծառի նման, այտերը ներս ընկած, աչքերը պլղած, շրթունքները սեւցած եւ ծնօտը քար կտրած:

Նախագահը՝ տօ, սրա՞ն նայիր՝ աչխատում է խօսել քաղաքավարի ձայնով, որպէսզի աւելի սոսկալի երեւնայ: Աղջիկների ականջին բաներ է փսփսում, թղթի վրայ նշաններ դընում, աչքերը յառում ետեւը կանգնած չեկիստ աշակերտների վրայ: Վարիչը ծունկը բռնում է, որպէսզի չխաղայ, չորս կոմիսը նայում լեղի ժպիտով ու մատերը վեր առնում:

Կրակ ու բոց տեսած այս մարդիկ նստել են խիստ քննութիւն անցնող երախաների նըման՝ սպրդնած, վախով լեցուն, տարօրինակ մի ճակատագրի հլու հպատակների պէս: Ամէն մարդ դողում է իր կտոր հացի համար, որովհետեւ գիտէ, որ եթէ «զտուի» եւ դադրի դառնալ պրոֆմիութեան անդամ, կը զրկուի իր պաշտօնից, կէսօրուան ճաշից, երեկոյեան կերած հաց պանիրից, աղտոտ եւ ցուրտ սենեակից: Կը դադրի մարդ լինել, կը վերածուի մի տեսակ պարիայի, կը զրկուի առանց նրան էլ գոյութիւն չունեցող իրաւունքներից:

Դրանցից շատերը, տաժանելի այդ տարիները կրել էին իրենց նիհարած ուսերի վրայ, երգել ու նուագել էին կէս անօթի, հրամանների մտրակի տակ բեմ էին բարձրացել կարմիր բանակայիններ եւ անորոշ ամբոխների առջեւ զանազան սօնատներ նուագելու համար, տենդոտ ձեռքերով աղեղներ էին փշրել, ճըպոտների տակ լարերի սիրտը մաշել, հիւանդ կոկորդով մելամաղձոտ երգեր հառաչել, եւ ամսի վերջին կէս փութ ցորեն եւ մի ֆունտ փչացած ձուկ ուսերին դրած վերադարձել էին խոնաւ խուցերի մութ անկիւնները, իրենց բըծաւոր տիֆոն եւ բազմատեսակ մալարիաները կերակրելու համար:

Նոյն այդ երաժշտանոցը կազմակերպուել էր ընդհանուր թշնամութեան, քմծիծաղի, հազար տեսակ ինտրինգների տակ: Տունէ տուն աթոռ էին փնտռել, մի կտոր կարպետ, մի դաշնամուր: Կոմիսարիատների առջեւ փող էին մուրացել, հիւանդանոցների առջեւ մահճակալ, ամերիկացիների առջեւ հին կօշիկ եւ ըղդեստ: Մեծ փոթորիկից ճողոպրած, անփետուր այդ թռչունները, ռուսական դաշտերից փախել էին հայրենի երկիր, կիսաքանդ տա-

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան